Պետրոս Դուրյան

Մանիշակ

Ո՛վ մանիշա՛կ, մանիշակ,
Ինչո՞ւ այդպես գլխիկոր
Նայիս հողին սըգավոր . . .
Ո՞ի ինչի՞ այդ նըշանակ:

Միթե դու կո՞ւյս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզքեզ գըտար այնչափ մութ,
Որ կը սըգաս սևահար:

Եթե դու ալ վարդին պես
Ունենայիր դույզն բոսոր,
Կը շիկնեիր, ինչպես որ
Շիկնեցավ այն վարդը վես,

Երբ տեսավ օր մը ներա
Վարդերն անբիծ այտերուն:
Շուշանին պես դալկություն
Եթե ըլլար քու վըրա:

Դժգունեիր որպես նա,
Ինչպես որ օր մը շուշան
Դժգունեցավ աննըշան

Տեսավ ձեռներն երբ ներա:

Եվ դեռ ըսե՞մ . . . օր մ՝երկին
Ամպոտեցավ . . . է՞ր արդյոք .
Երբոր կ՛ըներ նե աղոթք,
Վերն հառած աչքն ու հոգին:

1871